

տիր և կատարեալ դասագրեանք աշխատասիրելու պիտի խրախուսուին : Թողումք յիշել ուրիշ շատ օգուտները, որոց ևս առիթ կը լինի Պ. Սանասարեանց : Ուստի և իրաւամբ կը զրաւէ ինչպէս մեր, նոյնպէս համայն Ազգիս զոհունակութեանց հաւատարմք :

Նոյնպէս շնորհակալութիւն կը մատուցանեմք առ պարոն Ուսանողս Ս. Պ. Բուրգի, որ ցանկանալով իւրեանց պարապոյ ժամերն նուիրել յօգուտ և այլն Հայ մանկուոյն կը ջանան մեր Ազգի դպրոցաց դասազրեանց պակասութիւնքը լրացնել, որով իւրեանց առ Ազգն ունեցած պարտաւորութիւնքը կերպիւ իւրիք վճարած կը լինին :

Իսկ ՎԱՅՅԵՐԷՆ ԿԱՐԳԱԼ ԵՒ ԳՐԵԼ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻՆ, և ԹՈՒՄԱՆՈՒԹԵԱՆ, մասին այսչափս բաւական է ասել, որ ըստ կարեւորութեանցն՝ խիստ յարմար և ղիւրին եղանակ կարող են թէ՛ դասատուաց և թէ՛ դասառուաց ընծայել՝ քիչ միջոցի մէջ մեծ արդտաւք և յառաջադիմութիւն ցոյց տալ. որով արժան է, որ յիշեալ դասազրեանքը մեր ամենայն ուսումնարանաց և դպրոցաց ընդունելի լինին. ուստի անշուշտ եմք, որ նոցա պորձածութիւնը կ'ընդհանրանայ :

Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Արժան կը համարիմք հետեւեալ Թղթառաջըր այսինքն գրութեանց խորագրերը առ Թագաւորն Հայոց, առ Թագաւորահայր Պարոնն, առ ընդհանուր Ապարապետն (գունդատալ). առ Տիկինն և առ կոյս կրօնաւորն, ա. Աթոռոյս զբառան մի հին ձեռագրէր քաղելով նուիրել ի տեղեկութիւն քանադէտ Հնասիրաց : Զեռագրերն վերջը լինելով, և Թղթեր պակաս, հետեւորտը յայտնի կերեւի այս Թղթառաջից այլ ևս այլ

անձանց վրայ ևս շարունակութիւն ունենալը. քայց աւա՛ղ, կամ անդգուշութեամբ և կամ որպիսի եւ իցէ պատահմամբ անկեալ կամ պատուեալ կորուսուած է. եւ այսքանը միայն կը մնար, զոր ներկալ ամսագրովս իղծ կալանք հաղորդել մեր ընթերցողաց :

Թղթառաջից պարունակած մի քանի պարագայրը նկատելով, այսպէս պէտք է իմանալ թէ յիշեալ օրինակները Ժ.-րդ, ԺԱ.-րդ և ԺԲ.-րդ դարուց մէջ գործածուած ո՞նէ է և նոյն ժամանակաց գրութիւններէն են մնացած :

ԹՂԹԱՌԱՋԻ

ԹԱԳ. — Տէրամբ Յիսուսի՝ 'ի փառս պարծանաց Գլխոյն Վրիստոսի՝ ահարկու և յաղթող 'ի վերայ Թշնամեաց խաչին Վրիստոսի, աստուածընտիր սուրբ Թագաւ. :

ԹԱԳ. — Ի հմանց(1) հնոց և 'ի նախնեաց բարեաց ընձեղեալ շառաւիղ բարի տնկեալ 'ի տան տեառն և 'ի գաւիթս աստուծոյ, հանդիսական հաւաքմամբ 'ի կոչմանէ վեհին նախակարգեալ 'ի Թագաւորական պատիւ ճոխութեան Բարեպաշտ և աստուածասէլ՝ Թագաւ. :

ՊԱՐ. — Լրումն և աւարտ կամացն աստուծոյ, սիրտ նորին և կատարող անաչառ պատուիրանին, աստուածամեծար ճոխութեամբ գերապատուեալ քան զնաւս հանուրց ամենից կարգեաց այնոց(2) կարգաւորիչ և ուղղիչ, մեծիմաստ և բազմահանձար, աստուածագութ իշխանաց Աշխան պար. Ի. Ե. Հեթ.(3) և Թագաւորահայր

(1) Գուցէ, է հիշմն. ըստ որում զուրկ է ի նշանակութենէ, բառս այս ի հիշմն :

(2) Ըստ այսմ էր յօրինակին, զոր մեր դժուարացար լուծանել, ուստի և յանձնեմք քանադիտաց :

(3) Այսպիսի էր գրեալ յօրինակին. զորոց զոտաջինն ուր, պարտէ իմանալ ուրիշ. գերկորդն,

ամենայն Հայոց. 'ի մեղապարտէ ողջ լեր զաւրացեալ 'ի կամն աստուծոյ՝ աւելեալ աւուրբք յամայր ամն ժամանակաց:

Պ — Խորին խորհրդով՝ առաջատես կամաքն Աստուծոյ ընտրեալ 'ի պատիւ պերճանաց իշխանական զահայեց, Վատաւոր իրաւանց կամացն աստուծոյ, մեծատոհմ՝ և ամեներեւելի, ամենխմաստուն և խոհեմ իշխանաց Իշխան Պար. Առաւ(1):

ԳՈՒՆԳՍԱՅԼԻ — Ծառաց Աստուծոյ և տիրող ծառայից նորին, ամենադով և ամենախնամ 'ի զաւրեղ Փրկէն մերմէ Յիսուսէ, անխնելի զաւրութեամբն արիացեալ՝ քաջամարտիկ զնուոր և արիադոյն Ապարապետ տանս Հայոց՝ բարեպաշտ և Վրիստոսաւեր իշխանաց Իշխան Ղուկասաբլ (շ" անան):

Թ. Ե. դժուարիմաց եղև մեզ. իսկ զերրորդն, Հեթ. գուցէ լիցի Հեթում Ա. որ թագաւորեցուցեալ ի տեղի իւր առկենդանութեամբն զորդին իւր զԼեւոն յետ ազատութեանն ի զերութենէ եղիպտացոց, յամի Տեառն 1269, եւ Հայոց, ԶԺԵ. եւ այնուհետեւ անշուշտ համարիւր նա ինքն Հեթում ա. իբրեւ թագաւորահայր, Թէպէտ Մակար անուամբ եւս կրօնաւորէր ի վանս առանձնացեալ:

(1) Կոստանդին. զոր Թուի մեզ լինել թագաւորահայրն, Հեթմոյ Ա. աւագ Պարսնն Կոստանդին իշխան, Տէր Բարձրբերդոյ, որ ի ժամանակի մահուան Լեւոնի Բ. արքայի, կարգեցաւ ի նմանէ՝ ընդ Սիրաղանայ կամ Ատան Պայլի, խնամակալ թագուհւոյն Զապէլայ (դստեր վերոյիշելոյն Լեւոնի Բ.). եւ յետ ինն ամսոց ի վախճանիլ իշխեալ սիրաղանայ դաւաճանութեամբ ոմանց, ընկալեալ վարէր զհոգաբարձութիւն թագաւորութեանն ի 1249 թ. եւ ի Հայոց ՈԿԸ: Եւ ի մեռանիլ առաջին ամուսնոյ թագուհւոյն Զապէլայ, կրկին ամուսնացոյց զթագուհին ընդ որդւոյ իւրում Հեթմոյ, որ նայն ինքն է Հեթում ա. թագաւոր յամի Տեառն 1224 եւ Հայոց ՈԶԳ:

ԿԻԿ — Կարող զաւրութեամբ (և) անվթար բազկաւ Յիսուսի բարձրացեալ և պանծացեալ առաջի Աստուծոյ և մարդկան, մեծապատիւ և ամենասիրելի բարեղարդ և իմաստնախոհ և արիական Օգնուոր Պարոն.

ԿԻԿ — Հրամանաւ հղաւին Աստուծոյ հաստատակա ընկալեալ զԱստուածապարդ և իշխանութեանդ պատիւ ընտրեալ. 'ի զարմից և զովեալ 'ի բնաւից Պարոն (շ" անան)

ԿԻՏ (ՏԻԿԵՆ) — Զրի և ամենառատ աւրհնութեամբ արժանացեալ՝ և բարի շառաւելաք բողբոջեալ, սիրող սրբոց և ընտանի Աստուծոյ, համահաւասար սրբոց և երջանիկ խնդաբերացն, և Վրիստոսի սիրողաց բարեհամբաւեալ բարեպաշտութեամբ Տիկին . . . :

ԿԻՏ (ՏԻԿԵՆ) — Ղևորեալ 'ի հետաշաղաց նախնեացն քոց բարեպաշտից՝ բարեաւեր և Աստուածասէր բարի Տիկին և մեծահարկի Ղշեոյ (շ" անան):

ՃԳՆԱԻՈՐ ԿՈՒՍԻ — Շշմարտութեան ճանապարհին անմոլար ընթացող՝ սիրող Վրիստոսի, և առեցող աշխարհի, սնեալ սրբութեամբ և զարգարեալ անարատութեամբ սուրբ ճգնաւորն և խաչակրաւն աշխատաւոր բարեպաշտի և մեծահարկի Կուսի (շ" անան)

ԳԻՄԱՌՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹՈՒՌՈՒՄՆ ՄԱՍԱՆՅ.

Զինչ այդ քննող հրաշէկ պատկեր Մուղայդ գողարիկ քաղցրարան. Զոր յիմն հրաշից ամեն ի յուշ, Եւ զղաշտ փաղփիւն եղիւսեան: